«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«17» հունիսի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հ. Թունյան

ԳԲԽ-21/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Բիդեք» ՍՊԸ-ի 03.06.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Բիդեք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Բիդեք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 03.06.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 2015թ. մայիսի 25-ի ժամը 04:30-ի «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության (այսուհետ նաև՝ Արձանագրություն) 1 կետով որոշում է կայացվել չեղյալ համարել Ընթացակարգի հրավեր-ծանուցումը, քանի որ

ծավալաթերթ-նախահաշվում առկա են թերություններ, որոնք ի հայտ են եկել ստացված բողոքի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ծավալաթերթ-նախահաշվի մանրամասն ուսումնասիրության արդյունքում, ինչպես նաև անհետաձգելի շինվերանորոգման պահանջներ են առաջացել, որոնք նույնպես պետք է ներառել ծավալաթերթ-նախահաշվի մեջ և նշված շտկումների ավարտից հետո կկազմակերպվի գնման նոր ընթացակարգ:

Ընկերությունը հայտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Արձանագրությամբ կայացված որոշումն ակնհայտ ապօրինի է և կայացվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) 74-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 35-րդ հոդվածով նախատեսված պահանջների կոպիտ խախտմամբ:

«Բիդեք» ՍՊԸ-ն խնդրել է անվավեր ճանաչել «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 22-ի թիվ 2 արձանագրությունը:

<u>2. «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

«Բիդեք» ՍՊԸ-ի 03.06.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարծիք չի ներկայացրել, սակայն նույն Ընթացակարգի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին 02.06.2015թ. 14:04-ին «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նույնաբովանդակ ահազանգի վերաբերյալ Պատվիրատուն 02.06.2015թ. գրությամբ հայտնել է, որ անհիմն է համարում «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 25-ի թիվ 2 արձանագրությունը անվավեր ճանաչելու պահանջի մասին «Բիդեք» ՍՊԸ-ի ահազանգը, քանի որ ծավալաթերթ-նախահաշվում առկա են եղել թերություններ, որոնք ի հայտ են եկել ստացված բողոքի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ծավալաթերթ-նախահաշվի մանրամասն ուսումնասիրության արդյունքում:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ առաջնորդվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» թիվ 168-Ն կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) որոշման 74-րդ կետով և ունի ՀՀ կառավարության համապատասխան թույլատվությունը:

Պատվիրատուն՝ Կենտրոնում 17.06.2015թ. բողոքարկման խորհրդի նիստին հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով ծավալաթերթ-նախահաշիվը, հայտնաբերել է թերություններ, ինչպես նաև առաջացել են անհապաղ շինաշխատանքներ, որոնք անհրաժեշտ է եղել ներառել ծավալաթերթ-նախահաշվում, որոնց շտկման արդյունքում փոփոխվել է ծավալաթերթ-նախահաշիվը, ինքը առաջարկել է հաղթող ընկերությանը կնքել պայմանագիր նշված պայմաններով, սակայն վերջինս հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Պատվիրատուն, հիմք ընդունելով Օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասը, այն է՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե պայմանագիր չի կնքվում, գնահատող հանձնաժողովի 25.05.2015թ. թիվ 2 արձանագրությամբ չեղյալ է համարել Ընթացակարգի հրավեր-ծանուցումը:

3. ԳԲԽ-21/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-21/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 2015թ. մարտի 18-ին հայտարարվել է «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 27.04.2015թ. ժամը 09:30-ին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2015թ. ժամը 04:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի որոշմամբ Ընթացակարգի հրավեր-ծանուցումը չեղյալ է համարվել գնահատող հանձնաժողովի կողմից ծավալաթերթ-նախահաշվում հայտնաբերված թերությունների, ինչպես նաև

առաջացած անհետաձգելի շինվերանորոգման պահանջները ծավալաթերթ-նախահաշվում ներառելու համար:

4. 26.05.2015թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է չկայացած բաց ընթացակարգի մասին հայտարարությունը, որի համաձայն «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի հրավեր-ծանուցումը, որի բացման նիստը տեղի է ունեցել 27.04.2015թ. ժամը 09:30-ին, համարվել է չեղյալ, քանի որ ծավալաթերթ-նախահաշվում առկա են թերությունների, ինչպես նաև անհետաձգելի շինվերանորոգման պահանջներ են առաջացել, որոնք նույնպես պետք է ներառել ծավալաթերթ-նախահաշվի մեջ:

4. ԳԲԽ-21/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Բիդեք» ՍՊԸ-ի 03.06.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի 02.06.2015թ. գրությունը, «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2015թ. ժամը 04:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝

- 2-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:
- 4-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե պայմանագիր չի կնքվում:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն

որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ՝ Կարգ) 74-րդ կետի համաձայն. «... Արգելվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարել գնման պահանջի դադարման հիմքով, երբ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն մնացել է առնվազն 5 օրացուցային օր, ինչպես նաև հայտերի բացումից հետո՝ բացառությամբ այդ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու թույլտվություն տալու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման առկայության»:

Բողոքի քննության ընթացքում Պատվիրատուի կողմից չեն ներկայացվել «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգը չկայացած հայտարարելը հիմնավորող որևէ ապացույց:

Մասնավորապես, Պատվիրատուն չի ներկայացրել բաց ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում ընդունելու համար հիմք հանդիսացած գնահատող հանձնաժողովի կողմից ծավալաթերթ-նախահաշվում հայտնաբերված թերությունների, ինչպես նաև առաջացած անհետաձգելի շինվերանորոգման պահանջների վերաբերյալ որևէ տեղեկատվություն:

Պատվիրատուն չի ներկայացրել նաև իր 02.06.2015թ. գրությամբ մատնանշված՝ Կարգի 74-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարությունից ստացած ընթացակարգը չկայացած հայտարելու թույլտվությունը:

Պատվիրտուն չի ներկայացրել Ընկերության կողմից փոփոխված ծավալաթերթ-նախահաշվով պայմանագիր կնքելուց հրաժարվելու փաստը հիմնավորող որևէ ապացույց:

Բացի այդ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու փոխարեն, գնահատող հանձնաժողովի 25.05.2015թ. ժամը 04:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետով որոշում է կայացվել չեղյալ համարել Ընթացակարգի հրավեր-ծանուցումը:

Ուստի գտնում ենք, որ Պատվիրատուն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2015թ. ժամը 04:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետով Ընթացակարգի հրավեր-ծանուցումը չեղյալ համարելու մասին կայացված որոշմամբ խախտել է Օրենքի 35-րդ հոդվածի և Կարգի 74-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Բիդեք» ՍՊԸ-ի 06.05.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2015թ. թիվ 2 արձանագրության 1-ին կետով «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի հրավեր-ծանուցումը չեղյալ համարելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-21/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մանուկյան